



ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ

ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՍԱԸՆԹ ԲԵՆՔԻՆԳ

«ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏ

Ակտի համարը և անվանումը՝	<i>№ 143, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ</i>
Ընդունող մարմինը՝	<i>Տնօրինություն</i>
Ընդունման ամսաթիվը և հիմքը՝	<i>20.11.2019թ. թիվ 85-Լ որոշում</i>
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝	<i>21.11.2019թ.</i>
Խմբագրության հերթական համարը՝	<i>02</i>
Կիրառող ստորաբաժանում(ներ)ը՝	<i>Վարկավորման դեպարտամենտ</i>
Վերանայման համար պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը՝	<i>Վարկավորման դեպարտամենտ</i>
Հրապարակայնությունը՝	<input type="checkbox"/> <i>հրապարակվող</i> <input checked="" type="checkbox"/> <i>սահմանափակ</i> <input type="checkbox"/> <i>գաղտնի</i>

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն ակտը սահմանում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Բանկ») կողմից ֆինանսավորվող բոլոր առևտրային վարկերի նախագծերի բնապահպանական և սոցիալական ռիսկերի տեսանկյունից գնահատման, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական փորձաքննության իրականացման կարգը՝ հաշվի առնելով ֆինանսավորվող նախագծի հետ կապված կոնկրետ ոլորտային, ժամանակային և ֆինանսական սահմանափակումները, ինչպես նաև սահմանում է Բանկի պարտավորությունները, դերակատարումը և մոտեցումները բնապահպանական և սոցիալական կայունության հարցում:
- 1.2. Սույն ակտը կիրառվում է Հաճախորդների վարկավորման գործընթացին մասնակցող և դրան օժանդակող Բանկի աշխատակիցների կողմից:
- 1.3. Սույն ակտը նպատակ է հետապնդում առաջնորդել Բանկի համապատասխան աշխատակիցներին և հաճախորդներին՝ համապատասխան ռիսկերի և դրանց հետևանքների բացահայտման հարցում, ինչպես նաև ուղեցույց է հանդիսանում այդ ռիսկերի կառավարման և գսպման համար:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

- 2.1. Բանկի կողմից իրականացվող վարկավորման և ներդրումային գործունեության ընթացքում առաջացած բնապահպանական և սոցիալական խնդիրների վերլուծության, բնապահպանական, սոցիալական, և որպես հետևանք՝ ֆինանսական ռիսկերը նվազագույնի հասցնելու նպատակով Բանկը խելամիտ միջոցներ է ձեռնարկում վարկառուների կողմից բնապահպանական և սոցիալական օրենսդրության (մասնավորապես «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, այսուհետ՝ «Օրենք», ինչպես նաև տվյալ բնագավառը կարգավորող այլ օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը) պահանջների պահպանումն ուսումնասիրելու ուղղությամբ (այսուհետ՝ «բնապահպանական և սոցիալական փորձաքննություն»):
- 2.2. «Սոցիալական հարցերը» վերաբերում են սոցիալական պաշտպանության ռիսկերին, որոնք կապված են հարկադրական վերաբնակեցումների և տեղաբնակների վրա վարկավորվող ծրագրերի հնարավոր ազդեցության, սոցիալական զարգացումների, ինչպես նաև միջազգայնորեն ճանաչված հիմնական աշխատանքային ստանդարտներին Բանկի ու նրա վարկառուների համապատասխանության հետ:
- 2.3. Նախագծի բնապահպանական և սոցիալական ռիսկերի մակարդակը որոշվում է հետևյալ գործոնների հիման վրա.
 - վարկառուի գործունեության ոլորտը և բնույթը,
 - վարկի չափը,
 - վարկի նպատակը,
 - վարկի տրամադրման ժամկետը,
 - վարկի ապահովման միջոցների բնույթը
 - վարկառուի կառավարման ստանդարտները:

- 2.4. Բնապահպանական և սոցիալական ռիսկերի մակարդակի վրա առավելագույն ազդեցություն ունեցող գործոնը վարկառուի գործունեության ոլորտն է, սակայն նախագծի ռիսկայնությունը գնահատելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել 2.3 կետում սահմանված բոլոր գործոնների ազդեցությունը՝ սահմանելով դրանց համար համապատասխան (ցածր, միջին կամ բարձր) ռիսկայնության մակարդակ:
- 2.5. Վարկային նախագծերի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման ընթացքում մեծ ուշադրություն է դարձվում նաև «Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի» (IFC) կողմից սահմանված 8 սկզբունքներին՝
- **Սկզբունք 1** - բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցության գնահատում և կառավարում,
 - **Սկզբունք 2** - աշխատուժ և աշխատանքային պայմաններ,
 - **Սկզբունք 3** - ռեսուրսի արդյունավետություն և փոշու արտանետման կանխարգելում,
 - **Սկզբունք 4** - համայնքի առողջություն և անվտանգություն,
 - **Սկզբունք 5** - հողերի ձեռքբերում և հարկադիր վերաբնակեցում,
 - **Սկզբունք 6** - կենսաբազմազանության պահպանում և կենդանական, բնական պաշարների կայուն կառավարում,
 - **Սկզբունք 7** - բնիկ ժողովրդի իրավունքներ,
 - **Սկզբունք 8** - պատմամշակութային արժեքներ:
- Վերոնշյալ 8 սկզբունքները ձևավորում են այն ստանդարտները, որոնց պետք է հետևեն ներգրավված կողմերը վարկավորման ծրագրի շրջանակներում:
- 2.6. Վարկային նախագծերի բնապահպանական և սոցիալական ռիսկերի ազդեցության տեսանկյունից դասակարգումը և բնապահպանական և սոցիալական փորձաքննության անհրաժեշտ մակարդակի որոշումն իրականացվում է համաձայն սույն ակտի 3-րդ գլխի, եթե այլ բան նախատեսված չէ Բանկի և այլ կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերով:
- 2.7. Բնապահպանական և սոցիալական փորձաքննությունը՝ համաձայն սույն ակտի 4-րդ գլխի, իրականացվում է այն վարկային նախագծերի համար, որոնց գործունեությունը ընդգրկված չէ սոցիալական և բնապահպանական բացառությունների ցանկում: Բնապահպանական և սոցիալական բացառությունների ցանկում ներառած նախագծերի ֆինանսավորումն արգելվում է:

3. ՆԱԽԱԳԾԵՐԻ ԴՍՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

- 3.1. Վարկառուի տնտեսական գործունեության ոլորտից և բնույթից, ինչպես նաև գործունեության ընթացքում առաջացող բնապահպանական և սոցիալական խնդիրների նշանակալիության աստիճանից ելնելով՝ վարկային նախագծերը դասակարգվում են հետևյալ կերպ.
- **Ցածր ռիսկայնության նախագծեր («Գ» կատեգորիա կամ Օրենքով փորձաքննություն չպահանջող այլ գործունեություն).** դրանք կապված են ոչ նշանակալից բնապահպանական և սոցիալական խնդիրների կամ ցածր բնապահպանական ռիսկերի հետ.
 - **Միջին ռիսկայնության նախագծեր («Բ» կատեգորիա).** դրանք այն ոլորտների նախագծեր են, որտեղ փորձաքննության արդյունքում հնարավոր է առանց դժվարության որոշել շրջակա միջավայրի վրա բնապահպանական և սոցիալական ռիսկերի ազդեցությունը և առաջարկել ստանդարտ միջոցներ դրանց վերացման համար.

- **Բարձր ռիսկայնության նախագծեր («Ա» կատեգորիա).** դրանք կապված են նշանակալից բնապահպանական և սոցիալական խնդիրների հետ, որոնց ուսումնասիրության համար անհրաժեշտ է ավելի մանրամասն փորձաքննության իրականացում:

Ռիսկերի վերոհիշյալ խմբերում ընդգրկվող գործունեության տեսակների ցանկը սահմանված է Օրենքով, իսկ բնապահպանական և սոցիալական բացառությունների ցանկը (որոնց ֆինանսավորումն արգելվում է) բերված է Հավելված 1-ում: Այն դեպքերում, երբ նախագիծը ֆինանսավորվում է միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում՝ ռիսկերի դասակարգումը և բացառությունների ցանկը ստուգվում է նաև տվյալ ֆինանսական կազմակերպության կողմից հրապարակված համապատասխան ցանկերով, քաղաքականություններով և/կամ այլ փաստաթղթերով:

4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՃԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

4.1. Բնապահպանական և սոցիալական փորձաքննության ընթացակարգը ընդգրկում է հետևյալ փուլերը.

4.1.1. **Առաջին փուլ.** Նախագծի ռիսկայնության տեսանկյունից գնահատում և մանրամասն բնապահպանական և սոցիալական փորձաքննություն չպահանջող նախագծերի վերհանում.

- Աշխատակիցը գնահատում է նախագիծը բացահայտելով դրա պատկանելությունը Օրենքով կամ Միջազգային ֆինանսական կազմակերպության կողմից հրապարակված ցանկով սահմանված ցածր, միջին կամ բարձր ռիսկային խմբերին: Նախագծի դասակարգը և համապատասխանությունը Բացառությունների ցանկին պետք է լինի փաստաթղթավորված: Նախագծերի համար մանրամասն բնապահպանական և սոցիալական փորձաքննություն իրականացվում է համաձայն 4.1.2. կետի:

- Բնապահպանական և սոցիալական հետագա մանրամասն փորձաքննություն չի պահանջվում՝

ա) եթե նախագծի ընդհանուր արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը կամ վարկի տևողությունը չի գերազանցում 12 ամիսը, և այն դասակարգված է որպես ցածր և միջին ռիսկայնություն ունեցող նախագիծ,

բ) առևտրի ֆինանսավորման բոլոր դեպքերում, ներառյալ ներմուծման և արտահանման ֆինանսավորումը, ակկրեդիտիվները, երաշխիքները, ֆակտորինգը և այլն:

- Վերը նշված դեպքերում նախագծի գնահատման արդյունքները անմիջապես ամփոփվում են «Բնապահպանական և սոցիալական ռիսկերի դասակարգման և համապատասխանության ձև» (Հավելված 4) փաստաթղթում: Այն նախագծերը, որոնց համար Բնապահպանական և սոցիալական մանրամասն փորձաքննություն չի պահանջվում, դրանց համապատասխանությունը բնապահպանական և սոցիալական հարցերը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին կարող է ճշտվել բանավոր, առանց հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու պահանջի:

4.1.2. **Երկրորդ փուլ.** մանրամասն բնապահպանական և սոցիալական փորձաքննության իրականացումը.

- Մանրամասն բնապահպանական և սոցիալական փորձաքննություն իրականացվում է միջին ռիսկային նախագծերի համար (երբ վարկի գումարը գերազանցում է 100 մլն ՀՀ դրամը կամ վարկի տևողությունը մեծ է 12 ամսից), և բարձր ռիսկայնություն ունեցող նախագծերի համար հետևյալ միջոցառումների կատարմամբ՝
 - այցելություն հաճախորդի գործունեության վայր,
 - օրենսդրության և նորմատիվային պահանջների պահպանության ստուգում,
 - ապահովության գնահատում՝ բնապահպանական տեսանկյունից (ֆիզիկական գրավի դեպքում)¹,
 - «Բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատման հարցաթերթիկ»-ի (Հավելված 2) լրացում:
- Փորձաքննություն իրականացնելիս՝ աշխատակիցը պարտավոր է անձամբ այցելել վարկառուի գործունեության վայր, ինչպես նաև պահանջել շրջակա միջավայրի և աշխատանքային առողջության և անվտանգության, ինչպես նաև աշխատանքային պայմանների և իրավունքների վերաբերյալ օրենսդրության պահանջների պահպանվածությունը հիմնավորող փաստաթղթեր:
- Միջին և բարձր ռիսկայնության նախագծերի ստուգման արդյունքում ծագած հարցերը քննարկվում են հաճախորդի ղեկավարության հետ, անհրաժեշտության դեպքում՝ բնապահպանական և սոցիալական հիմնախնդիրները կարգավորող մարմինների հետ: Փորձաքննություն իրականացնող աշխատակիցը պետք է համոզվի, որ հաճախորդի ղեկավարությունը հասկանում է բնապահպանական և սոցիալական հարցերի նշանակությունը իրենց գործունեության համար և գիտակցում է ինչպիսի քայլեր է պետք ձեռնարկել այդ հարցերի վերահսկման համար: Այն դեպքում, երբ ծագում են բացատրություն պահանջող հարցեր, որոնց հաճախորդը կամ Բանկը չի կարող պատասխանել, ապա անհրաժեշտ է ներգրավել բնապահպանական և/կամ սոցիալական փորձագետի:
- Մանրամասն փորձաքննության համար կիրառվում է «Բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատման հարցաթերթիկ»-ը (Հավելված 2), որը ներառում է բնապահպանական և սոցիալական հարցաշար՝ ՀՀ օրենսդրության հետ համապատասխանությունը ստուգելու համար: «Բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատման հարցաթերթիկ»-ը կցվում է վարկային հայտին և պահպանվում է հաճախորդի վարկային գործում:

4.1.3. Երրորդ փուլ. բնապահպանական և սոցիալական փորձաքննության արդյունքների ամփոփումը վարկավորման մասին որոշում կայացնելու նպատակով.

- Բնապահպանական և սոցիալական փորձաքննության արդյունքները Բանկի աշխատակցի կողմից ամփոփվում են «Բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատման հարցաթերթիկ»-ում (Հավելված 2) և/կամ արտաքին փորձագետի կողմից տրված եզրակացության մեջ: Հարցաթերթիկում եզրակացության մեջ տրվում է նախագծի ռիսկայնության վերջնական գնահատականը (համաձայն 3-րդ գլխի), որը հանդիսանում է վարկի տրամադրման վերաբերյալ որոշման վրա ազդող գործոններից մեկը:

¹ Այն դեպքում, երբ վարկի ապահովություն է հանդիսանում անշարժ գույք, մասնագետը պետք է պարզի, թե արդյոք տվյալ գույքի նկատմամբ 200 կամ ավելի անձինք ունեն իրավունքներ (ապրում, օգտագործում կամ զբաղեցնում են): Եթե վարկավորվող ծրագրի հետևանքով 200 կամ ավելի անձինք ենթակա են տեղահանման, ապա տվյալ գույքը չի կարող ընդունվել որպես գրավ Միջազգային Օրագրերով ֆինանսավորվող նախագծերի համար:

- Բարձր կամ միջին ռիսկային նախագծերի ֆինանսավորումը կարող է մերժվել կամ կարող են ձեռնարկվել բացահայտված ռիսկերի նվազեցման միջոցներ:
- Բնապահպանական և սոցիալական ռիսկերի զսպման նկատմամբ միջոցների իրականացման առաջարկները վարկառուի հետ նախապես համաձայնեցնելուց հետո աշխատակցի կողմից Վարկային կոմիտեին են ներկայացվում «Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ծրագրի» (Հավելված 3) միջոցով (անհրաժեշտության դեպքում):
- Աշխատակցի կողմից հայտնաբերված ռիսկերի վերահսկման ուղղությամբ կարող են ձեռնարկվել բազմաթիվ միջոցառումներ, այդ թվում՝ վարկային պայմանագրի մեջ շրջակա միջավայրի պահպանության պայմանների ներառում:
- Ռիսկերի ընդունելի լինելը կախված է կոնկրետ գործունեության յուրահատկություններից: Ռիսկի աստիճանը համարվում է ընդունելի, եթե բնապահպանական և սոցիալական ռիսկերը կազմակերպության կենսունակության, վարկը մարելու, գրավի արժեքի համար էական սպառնալիք չեն ներկայացնում, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական ռիսկերի տեսանկյունից չունեն «բարձր» ռիսկի դաս և Բանկի համար ուղիղ պարտավորությունների և հեղինակության համար սպառնալիք չեն ներկայացնում:
- Վարկային կոմիտեն դիտարկում է նախագիծն նկատմամբ իրականացված փորձաքննության արդյունքները և առկայության դեպքում «Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ծրագրեր»-ը (Հավելված 3), որոնց հիման վրա կայացնում է վարկի տրամադրման վերաբերյալ որոշումը:
- Վարկային կոմիտեի որոշումը կարող լինել.
 - վարկային պայմանագրում շրջակա միջավայրի, առողջության, աշխատանքի և բնապահպանական անվտանգության պահպանմանն ուղղված պայմանների ներառումը.
 - վարկային պայմանագրի պայմանների (չափի, ժամկետի, տոկոսադրույքի) փոփոխումը.
 - վարկային հայտի մերժումը բնապահպանական և սոցիալական ռիսկերի մակարդակը անընդունելի լինելու պատճառով.
 - ԲՄ ռիսկի կառավարման ծրագրի հետ հաճախորդի անհամաձայնության պատճառով:

5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

- 5.1. Բանկի կողմից վարկի գործողության ընթացքում մշտապես իրականացվում է հայտնաբերված բնապահպանական և սոցիալական ռիսկերի վերահսկողություն: Վերահսկողությունն իրականացվում է ինչպես նախապես հաստատված «Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ծրագրի» համապատասխան, այնպես էլ ընթացիկ մոնիթորինգների ընթացքում:
- 5.2. Բանկը արտահաներթ անդրադառնում է բնապահպանական և սոցիալական ռիսկերին, այն դեպքում եթե.
- առաջացել է շրջակա միջավայրին կամ առողջությանը և անվտանգությանը սպառնացող արտակարգ կամ վթարային իրավիճակ,

- կան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև քաղաքացիների կամ իրավաբանական անձանց հաղորդումներ շրջակա միջավայրին կամ առողջությանը և անվտանգությանը սպառնացող իրավիճակի մասին, եթե այդ իրավիճակը կարող է ազդել Բանկի նկատմամբ Վարկառուների պարտավորությունների պատշաճ կատարման վրա,
 - տեղի է ունեցել հաճախորդի գործունեության ոլորտի կամ տեսակի փոփոխություն,
 - տեղի են ունեցել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ և աշխատակիցների առողջության և անվտանգության օրենսդրության մեջ փոփոխություններ,
 - հայտնաբերվել է ֆինանսավորվող նախագծի իրականացման արտոնագրի ժամկետի ավարտ,
 - տեղի են ունեցել բնապահպանական և սոցիալական հիմնախնդիրների վերահսկողությունն իրականացնող մարմինների կողմից հաճախորդից տույժերի գանձում, հետապնդում, հետախուզություն բնապահպանական և սոցիալական ցանկացած դժբախտ պատահարի, վթարների և այլ բնապահպանական և սոցիալական ռիսկերի վրա ազդող այլ պայմանների փոփոխության վերաբերյալ տեղեկատվության ստացման դեպքում:
- 5.3. Վարկային պայմանագրի տեքստում պետք է ընդգրկվեն պայմաններ, որոնք նախատեսում են Վարկառուների պարտականությունը՝ ծանուցելու Բանկին շրջակա միջավայրին վնաս պատճառելու հետ կապված նշանակալից իրադարձությունների մասին:
- 5.4. Մոնիթորինգն իրականացում է աշխատակցի կողմից անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը հավաքագրելու կամ, անհրաժեշտության դեպքում, վարկառուի գործունեության վայր այցելության միջոցով: Վարկառուների կողմից բնապահպանական և սոցիալական պահանջների կատարումը համակողմանիորեն ստուգելու անհրաժեշտության դեպքում Բանկը կարող է համագործակցել իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ:
- 5.5. Վարկի գործողության ընթացքում Աշխատակցի կողմից իրականացվում է հաճախորդի վերաբերյալ հետևյալ տեղեկատվության ստուգում՝
- թույլտվությունների (այդ թվում գործունեության արտոնագրերի ժամկետների ստուգում),
 - պետական մարմինների եզրակացությունների,
 - ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների,
 - անկախ փորձագետների հաշվետվությունների,
 - հանրամատչելի տեղեկատվության:
- 5.6. Արդյունքում հայտնաբերված տվյալների հիման վրա իրականացվում են ճշգրտումներ: Աշխատակցի կողմից անհրաժեշտության դեպքում կազմվում է ճշգրտման գործողությունների պլան, որի միջոցով իրականացվում է հաճախորդից համապատասխան տեղեկատվության ստացում, և փոփոխություններ «Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ծրագրում»: Աշխատակիցը կարող է նաև վարկառուի տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ միջոցներ ձեռնարկել:
- 5.7. Բնապահպանական մոնիթորինգի իրականացման ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին՝
- հաճախորդի կողմից հաստատված ֆինանսատնտեսական նորմերի (վճարներ, տուգանքներ, պարտքեր) պահպանում,

- հաճախորդի կողմից շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ իրավական ակտերի պահանջների պահպանում,
- հաճախորդի կողմից վարկային պայմանագրով սահմանված շրջակա միջավայրի վերաբերյալ պահանջների պահպանում,
- նորմատիվային բազային փոփոխության տենդենցները, որի փոփոխության արդյունքում հնարավոր է այնպիսի պահանջների ստեղծում, որի արդյունքում հաճախորդի կողմից անհնարին կլինի պայմանագրով սահմանված պայմանների պահպանումը, կստեղծվեն նոր ռիսկեր երկու կողմերի համար,
- հաճախորդի գործունեության մեջ կիրառվող գործընթացների փոփոխության ազդեցությունը շրջակա միջավայրի պահպանության պահանջների վրա:

5.8. Սոցիալական մոնիթորինգի իրականացման ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին.

- աշխատակազմի կառուցվածքի փոփոխություն և/կամ կրճատում,
- աշխատանքային և հանրային առողջության և ապահովության պահանջների խախտում,
- հարկադիր աշխատանքի առկայություն,
- անչափահասների աշխատանքի առկայություն,
- միգրանտների աշխատուժի ներգրավում անբարենպաստ աշխատանքային պայմաններով,
- աշխատակիցների հանդեպ խտրականության առկայություն,
- արհմիությունների և աշխատանքային շահերի պաշտպանության միջոցառումների առկայություն,
- վարկառուի կազմակերպությունում աշխատանքային ստանադարտների, դրանց գանահատման և քաղաքականության հետ կապված փաստաթղթերի առկայություն:

5.9. Բնապահպանական և սոցիալական մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված փոփոխությունների հիման վրա հնարավոր է վարկային պայմանագրի լրացուցիչ պայմանների ներառում, որն իրականացվում է լրացուցիչ համաձայնագրերի կնքման միջոցով:

6. ԱՅԼ ՂՈՒՅԹՆԵՐ

- 6.1. Սույն ակտով սահմանված դրույթների կատարման, խախտումների բացահայտման և առաջացած խնդիրների մասին զեկուցման, սույն ակտի վերանայման ինչպես նաև ղեկավարությանը և/կամ Միջազգային ֆինանսավորող կազմակերպությունների տրամադրվող հաշվետվությունների համար պատասխանատու է Բանկի ռիսկերի կառավարման համար պատասխանատու ստորաբաժանումը:
- 6.2. Սույն ակտով սահմանված դրույթների համապատասխան ԲՄ ռիսկերի բացահայտման, դասակարգման, մանրամասն փորձաքննություն իրականացնելու, ԲՄ ռիսկերի կառավարման ծրագիր կազմելու և վերահսկելու համար պատասխանատու է Բանկի վարկավորման համար պատասխանատու ստորաբաժանումը:
- 6.3. Սույն ակտով սահմանված դրույթների համապատասխան նախագծերի ըստ ռիսկայնության աստիճանի դասերի հաշվառման համար պատասխանատու է Բանկի հաճախորդների սպասարկման համար պատասխանատու ստորաբաժանումը:
- 6.4. Սույն ակտով սահմանված դրույթների համապատասխան Բանկի ստորաբաժանումների գործառույթներն իրականացնելիս ի հայտ եկող իրավաբանական խնդիրների, մասնա-

վորապես իրավական ակտերի ներկայացման, մեկնաբանման, պետական լիազոր մարմինների հետ փոխգործակցության և այլն, կարգավորման համար պատասխանատու է Բանկի իրավաբանական գործառույթների համար պատասխանատու ստորաբաժանումը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԴԵՑՈՒՅՑԻ ՀԱՎԵԼՎԱԾ

1. Բնապահպանական բացառությունների ցանկ

Բանկը չպետք է տրամադրի վարկեր հետևյալ գործունեությունների մեջ ներգրավված վարկառուներին՝

- Արտադրություն կամ գործունեություն, որը պարունակում է երեխայի հարկադիր² կամ վտանգավոր աշխատանք³, վնասակար է կամ շահագործող,
- Որևէ արտադրանքի արտադրություն կամ առևտուր կամ գործունեության ծավալում, որը համարվում է ապօրինի տվյալ երկրի օրենքներով կամ միջազգային կոնվենցիաներով և պայմանգրերով,
- Զենքի և զինամթերքի արտադրություն կամ առևտուր,
- Մոլե խաղեր, խաղատներ և նմանատիպ ձեռնարկություններ,
- Վայրի կենդանիների և նրանցից պատրաստված ապրանքների առևտուրը, որը կարգավորվում է CITES կոնվենցիայի դրույթներով⁴,
- Ռադիոակտիվ նյութերի արտադրություն կամ առևտուր⁵,
- Չկապված ասբեստամանրաթելերի և ասբեստ պարունակող նյութերի արտադրություն, օգտագործում կամ առևտուր⁶,
- Չվերահսկվող անտառների փայտի կամ այլ անտառային ապրանքների արտադրություն կամ առևտուր,
- Պոլիքլորինացված բիֆենիլ պարունակող էլեկտրական սարքերի և սարքավորումների արտադրություն կամ առևտուր⁷,
- Մեծածավալ վտանգավոր քիմիական նյութերի արտադրություն, առևտուր, պահեստավորում կամ տեղափոխում կամ առևտրային նպատակներով դրանց լայնածավալ օգտագործում⁸,
- Միջազգային արգելքի տակ գտնվող դեղագործական առարկաների արտադրություն կամ առևտուր,
- Միջազգային արգելքի տակ գտնվող պեստիցիդներ և հերբիցիդներ պարունակող առարկաների արտադրություն կամ առևտուր,
- Միջազգային արգելքի տակ գտնվող օգոնը քայքայող նյութերի արտադրություն կամ առևտուր⁹,

² Հարկադիր աշխատանք նշանակում է ոչ կամավոր հիմունքներով կատարված որևէ աշխատանք կամ ծառայություն, որն իրականացվում է ինչ-որ անձի հարկադրանքով կամ պատժի սպառնալիքով,

³ Վտանգավոր աշխատանք նշանակում է երեխաների աշխատուժի օգտագործում, որը տնտեսապես շահագործական է, կամ հավանաբար վտանգավոր, խանգարում է երեխայի կրթությանը, վնասակար է երեխայի առողջությանը, կամ ֆիզիկական, հոգեբանական, հոգևոր, բարոյական կամ սոցիալական զարգացմանը,

⁴ Վայրի ֆլորային և Ֆաունային վտանգ սպառնացող տարածքներում միջազգային առևտրի կոնվենցիա,

⁵ Մա չի կիրառվում բժշկական, որակի կառավարման (չափման) և այլ սարքավորումների ձեռք բերմանը, որոնք ըստ ՄՖԿ-ի ունեն քիչ և/կամ համեմատաբար պաշտպանված ռադիոակտիվություն,

⁶ Մա չի վերաբերվում այն կապակցված ասբեստոս ցեմենտի ծածկոցների ձեռք բերմանը և օգտագործմանը, որոնցում ասբեստոսի պարունակությունը 20%-ից քիչ է,

⁷ Պոլիքլորային բիֆենիլը շատ թունավոր քիմիական նյութերի խումբ է, որը 1950-1985թթ.-ից ի վեր առավել հաճախ հանդիպում է նավթով լցված էլեկտրական տրանսֆորմատորների, կոնդենսատորների և կոմուտացիոն սարքավորումների մեջ,

⁸ Վտանգավոր քիմիականների շարքում են նաև բենզինը, կերոսինը և այլ նավթային արտադրանքներ,

⁹ Օգոնը քայքայող նյութեր (ODS) քիմիական նյութեր են, որոնք ռեակցիայի մեջ են մտնում և քայքայում են ստրատոսֆերային օզոնը՝ առաջանելով օզոնային շերտի անցքեր, Մոնրեալի արձանագրությունը թվարկում է ODS-ները և նրանց նպատակային կրճատումների ու աստիճանական մարումների օրերը, Մոնրեալի արձանագրության կողմից վերահսկվող քիմիական միացությունների

- Ձկնորսության նպատակով ուռկանների տեղադրում և 2.5 կմ երկարությունը գերազանցող ցանցերով ձկնորսություն ծովային միջավայրում,
- Այնպիսի արտադրություն կամ գործունեություն, որը տեղահանում է բնիկներին իրենց սեփականությունը հանդիսացող հողերից կամ դատական վճռով իրենց պատկանող սեփականությունից՝ առանց վերջիններիս համաձայնության,
- Այնպիսի արտադրություն կամ գործունեություն, որը առաջացնում է «էական» հարկադիր տեղահանում¹⁰:
- Քլորֆտորածխաջրածինների, գալլոնների և Մոնրեալի արձանագրությամբ կարգավորվող այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը կամ առևտուրը,
- Թափոնների կամ նրանցից ստացված նյութերի միջազգային (միջսահմանային) առևտուրը,
- Կոյուղաջրերի վերամշակման գործարաններ, թափոնների գերեզմանոցներ,
- Տանկերների կողմից նավթի բեռնաթափումը առանց Միջազգային ծովային կազմակերպության իրական հավաստագրերի,
- Միջուկային ռետուրսների և դրանց պահեստամասերի արտադրությունը և վաճառքը,
- Վտանգավոր թափոնների պահպանությունը, վերամշակումը կամ ոչնչացումը,
- Գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների արտանետումը շրջակա բնական միջավայր և այդ օրգանիզմների առևտուրը,
- Խոշոր ամբարտակների և ջրամբարների, ջրանցքների և ջրմուղկայանների շինարարությունը կամ նշանակալից ընդարձակումը,
- Լեռնային ապարների և փլվածքների վերամշակումը ցիանիդներով՝ թանկարժեք մետաղների արդյունահանման նպատակով,
- Հիմնականում արևադարձային խոնավ անտառներում առևտրային փայտամթերում,
- Ածխի, նավթի և բնական գազի արդյունահանում և մշակում,
- Հակաժողովրդավարական և/կամ նացիստական լրատվության ստեղծում և տարածում,
- Գործունեություն, որը կարող է վնաս պատճառել մշակույթային և պատմամշակույթային օբյեկտներին:

ցուցակը, որը ներառում է աերոզոլներ, սառեցնող նյութեր, փրփուր փչող գործիքներ, լուծիչներ և հրդեհից պաշտպանող գործիքներ, ինչպես նաև մանրամասներ պայմանագիրը ստորագրող երկրների և աստիճանական մարման նպատակային օրերի մասին առկա է Շրջակա միջավայրի և սոցիալական զարգացման բաժնում,

¹⁰ Արտադրության կամ գործունեության ազդեցությունը համարվում է «էական», եթե 200 կամ ավելի անձինք ենթակա են ֆիզիկական տեղահանման կամ կորցնում են իրենց արտադրական ակտիվների 10 տոկոսից ավելին:

**Բնապահպանական և սոցիալական ռիսկերի
գնահատման հարցաթերթիկ**
(լրացվում է մանրամասն ԲՄ փորձագիտություն իրականացնելիս)

Կազմակերպության անվանումը	
Հաճախորդի գործունեության տեսակը (Օր.՝ առևտուր, արտադրություն, ծառայություններ և այլն)	(հակիրճ նկարագրեք արտադրության և/կամ գործունեության գործընթացը)
Վարկի վերաբերյալ մանրամասն տվյալներ (վարկի գումարը, մարման պայմանները, արժույթը)	

	Այո	Ոչ
Այցելություն (Եթե կատարվել է, նշել ամսաթիվը)		
Ստուգված է ըստ Բացառությունների Ցանկի		
Համապատասխանում է բնապահպանական և սոցիալական հարցերը կարգավորող ՀՀ օրենսդրությանը		

Շրջակա Միջավայրի և Սոցիալական ազդեցության գնահատման նպատակով տրվող հարցեր	Այո	Ոչ	Նկատառումներ
A. Ֆինանսավորման նպատակը			
<ul style="list-style-type: none"> ▪ օժանդակում առկա բիզնեսի զարգացմանը ▪ նոր միջոցների ներդրում բիզնեսի գործունեության վայրերում ▪ առկա միջոցների նորացում կամ համալրում ▪ բիզնեսի գործունեության համար անհրաժեշտ նոր տարածքի ձեռքբերում 			
B. Ծրագրի տեղակայվածությունը			
<ul style="list-style-type: none"> ▪ տեղակայված է ՇՄ պահպանության տեսակետից զգայուն տարածքում կամ տարածքի հարևանությամբ ▪ կարող է վնասել պատմական/մշակութային հուշարձաններ և այլ տարածքներ ▪ կարող է ներխուժել զգայուն էկոհամակարգեր (օր.՝ պաշտպանված տարածքներ կամ երկրային կենդանի բնության բնակավայրեր) ▪ ունի հողերի դեգրադացման ազդեցություն 			
C. Ծրագրի պոտենցիալ ազդեցությունը՝ ՇՄ-ի և Ս ռիսկերի տեսանկյունից			
<ul style="list-style-type: none"> ▪ Հետևում է արդյոք վարկառուն աշխատողների շահերին, հատկապես նրանց, որոնք վերաբերվում են ազգային փոքրամասնություններին, ստիպողական աշխատանքի արգելմանը, ինչպես նաև աշխատանքի վայրում աշխատակիցների նկատմամբ անխտրական վերաբերմունքի կիրառմանը: 			

<ul style="list-style-type: none"> ▪ Պահպանվում են արդյոք վարկառուի կողմից Աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ սահմանված պահանջները 			
<ul style="list-style-type: none"> ▪ Արդյոք կազմակերպությունը սահմանափակում է աշխատողների իրավունքները՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքների ներկայացման և աշխատանքային պայմանների պաշտպանության հարցում: 			
<ul style="list-style-type: none"> ▪ Արդյոք առկա է աշխատանքին վերաբերվող բողոք կամ ընթացիկ աշխատանքային դատական հայց 			
<ul style="list-style-type: none"> ▪ Կազմակերպությունը հետևում է աշխատանքային հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին 			
<ul style="list-style-type: none"> ▪ Ապահովվում են արդյոք աշխատակիցների առողջության ապահովության բավարար պայմաններ 			
<ul style="list-style-type: none"> ▪ Պահպանվում են արդյոք անվտանգության ապահովման ստանդարտները 			
<ul style="list-style-type: none"> ▪ Պահպանվում են արդյոք հակահրդեհային անվտանգության կանոնները 			
<ul style="list-style-type: none"> ▪ Ապահովվում են արդյոք բոլոր միջոցները հիգիենայի կանոններին հետևելու համար և արդյոք դրանք պահպանվում են վարկառուի կողմից 			
<ul style="list-style-type: none"> ▪ սարքավորումների ներդրման արդյունքում պատճառում է էսթետիկ դեգրադացիա և սեփականության արժեզրկում 			
<ul style="list-style-type: none"> ▪ պատճառում է հողօգտագործման համակարգի փոփոխություն կամ հողօգտագործման կոնֆլիկտներ 			
<ul style="list-style-type: none"> ▪ Արդյոք նախագծի հետևանքով հնարավոր է ֆիզիկական կամ տնտեսական վերաբնակեցում կամ հարկադիր տեղահանում 			
<ul style="list-style-type: none"> ▪ պարունակում է կարճաժամկետ շինարարական ազդեցություն (աղմուկ և փոշի, էռոզիա, նստվածքների արտահոսք) 			
<ul style="list-style-type: none"> ▪ առաջացնում է թուչող փոշի տեղափոխությունների, բեռնաթափման, վառելանյութի և/կամ մշակման համար նախատեսված հումքային նյութերի պահեստավորման ընթացքում և աղտոտված արտահոսք՝ վառելանյութի և/կամ նյութերի պահեստավորումից 			
<ul style="list-style-type: none"> ▪ արտադրական գործընթացի ընթացքում առաջացած արտանետումներից առաջացնում է օդի աղտոտվածություն 			
<ul style="list-style-type: none"> ▪ գործունեության ընթացքում ստեղծում է խան- 			

գարիչ աղմուկ բնակավայրերին և ընդունիչներին մոտ գտնվելու պատճառով			
<ul style="list-style-type: none"> արտադրական գործընթացից, կոմունալ կառույցների գործունեությունից, սանիտարական կոյուղուց, կեղտից և զանազան արտանետումներից առաջացնում է հողի և ջրի աղտոտվածություն 			
<ul style="list-style-type: none"> տանում է դեպի տոքսիկ, կարծր և վնասակար աղբի առաջացմանը 			
<ul style="list-style-type: none"> արտադրական գործընթացը ստեղծում է վտանգ հասարակության առողջության և ապահովության համար (աղբի/կեղտաջրերի արտանետումների, օդի ցածր որակի, աղմուկի և այլն պատճառով): 			
<ul style="list-style-type: none"> Առաջացնում է զգալի (տարեկան 100,000 տոննա և ավել) ծավալով ածխաթթու գազի արտանետում 			
<ul style="list-style-type: none"> 			
<ul style="list-style-type: none"> Առաջացնում է առողջության համար ռիսկեր և հանգեցնում է աշխատանքային և կենսակերպի փոփոխությունների: 			
D. ՇՄ պոտենցիալ օգուտներ			
<ul style="list-style-type: none"> ծրագիրը կնպաստի նոր տեխնոլոգիաների կամ սարքավորումների կիրառման հետևանքով առավել մաքուր արտադրական գործընթացին 			
<ul style="list-style-type: none"> արտադրական գործընթացի ընթացքում ծրագիրը կբարելավի ջրի և էներգիայի արդյունավետությունը 			
E. Արդյոք Վարկառուն ունի՞ առողջապահությունը և աշխատանքի անվտանգությունը կարգավորող միջոցառումներ և կանոնակարգեր, որոնք համապատասխանում են աշխատատեղերում ծավալվող գործունեությանը և շրջակա համայնքներին			(եթե այո, ապա նկարագրեք մանրամասները)
F. Առկա են արդյոք ՇՄ թույլտվություն տվյալ գործնեության համար, ինչպիսին են՝ կեղտաջրի արտանետման, քիմիական պահեստավորման, ջրի հանման, օդի արտանետման և այլնի թույլտվությունը.			(եթե այո, ապա նկարագրեք և վստահեցրեք համապատասխանելիության իրագործելիությունը)

Եզրակացություն (հիմնավորվում է ՇՄ և Ս ազդեցության գնահատականը)

<p>Տվյալ բիզնեսի ՇՄ և Ս ազդեցության ընդհանրական գնահատում</p> <p><input type="checkbox"/> բարձր ռիսկային</p> <p><input type="checkbox"/> միջին ռիսկային</p> <p><input type="checkbox"/> ցածր ռիսկային</p> <p>Արդյոք կա անհրաժեշտություն կազմելու բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման ծրագիր</p> <p><input type="checkbox"/> այո</p> <p><input type="checkbox"/> ոչ</p>	<p><i>Վարկային վերլուծարան</i> ԱԱՀ և ստորագրությունը _____</p> <p>_____</p> <p><i>ԲՍՌ Պատասխանատու</i> ԱԱՀ և ստորագրությունը _____</p> <p>_____</p> <p>Ամսաթիվը _____ / _____ / _____</p>
--	---

**Բնապահպանական և սոցիալական ռիսկերի
կառավարման ծրագիր**

Կազմակերպության անվանումը _____

Վարկի գումարը _____ Ժամկետը _____

Նպատակը _____

• Ռիսկերի նվազեցման ծրագիր

Ծրագրի նախագծման փուլ					
Գործունեության տեսակը	Պահանջվող թույլտվություններ (արտոնագրեր և այլն)	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը	Ազդեցության նվազեցման համար առաջարկվող միջոցառումը	Ազդեցության նվազեցման միջոցառման իրականացման պատասխանատվությունը	Իրականացման ժամանակահատվածը
1.					
2.					
.....					
Իրականացման փուլ					
1.					
2.					
.....					

• Մոնիթորինգի ծրագիր

Մոնիթորինգի ենթակա չափանիշը	Մոնիթորինգի իրականացման կարգը (ինչ պետք է գնահատվի և ինչպես)	Մոնիթորինգի իրականացման ժամկետները (ժամանակահատվածը և հաճախականությունը)	Մոնիթորինգի իրականացման պատասխանատուն
1.			
2.			
.....			

Ես, _____, հանդիսանալով _____
_____, կարևորելով մեր կազմակերպության սոցիալական պատասխա-
նատվությունը բնապահպանական և սոցիալական ռիսկերի նվազեցման հարցում,
կազմակերպության անունից պարտավորություն եմ ստանձնում անվերապահորեն
հետևել և գործադրել առավելագույն հնարավոր ջանքերը վերը նշված բնապահպա-
նական և սոցիալական ռիսկերի կառավարման ծրագրով նախատեսված միջոցառում-
ների իրականացմանը, ինչպես նաև հնարավորինս օժանդակել բանկի իրավասու աշ-
խատակիցներին վերահսկելու նշված ծրագրի համապատասխան պարտավորություն-
ների իրականացման գործընթացը: Գիտակցում և տեղեկացված եմ, որ ծրագրով
նախատեսված գործողությունները կատարելուց անհիմն հրաժարվելը, ոչ պատշաճ
կարգով կատարելը, գործունեության ընթացքում բնապահպանական և սոցիալական
ռիսկերի աճը և այլ նմանատիպ խնդիրները կարող են հիմք հանդիսանալ բանկի կողմից
տրամադրվող վարկի/երի ամբողջական վաղաժամկետ վերադարձման պահանջ
ներկայացնելու համար:

Վարկատու՝

ԱԱՀ և ստորագրությունը _____

Բանկի աշխատակից՝

ԱԱՀ և ստորագրությունը _____

պաշտոնը _____

ամսաթիվը ____/____/____թ.

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի դասակարգման և համապատասխանության ձև

Կազմակերպության անվանումը	
Հաճախորդի գործունեության ոլորտը (արտադրություն, առևտուր, սպասարկում և այլն)	
Վարկի վերաբերյալ մանրամասներ (վարկի գումարը, արժույթը, ժամկետը, նպատակը)	

Այցելություն (Եթե կատարվել է, նշել ամսաթիվը)	
Ստուգված է ըստ Բացառությունների Ցանկի	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/>
Ծրագրի ազդեցությունը ԲՄ ռիսկերի վրա	Ցածր <input type="checkbox"/> Միջին <input type="checkbox"/> Բարձր <input type="checkbox"/>
Համապատասխանում է բնապահպանական և սոցիալական հարցերը կարգավորող ՀՀ օրենսդրությանը	Ամբողջովին համապատասխանում է <input type="checkbox"/> Հիմնականում համապատասխանում է <input type="checkbox"/> Ե <input type="checkbox"/> Մասամբ համապատասխանում է <input type="checkbox"/> Ընդհանրապես չի <input type="checkbox"/> համապատասխանում
Արդյոք կա անհրաժեշտություն իրականացնելու մանրամասն ԲՄ փորձաքննություն, եթե այո ապա	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/>
Արդյոք իրականացված է մանրամասն ԲՄ փորձաքննությունը	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/>
Կազմվել է արդյոք ԲՄ ռիսկերի կառավարման ծրագիր	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/>

Եզրակացություն (Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատականի հիմնավորում)

Ներկայացվող վարկավորման ծրագիրը ԲՄ ռիսկերի տեսանկյունից բանկի համար
 ԸՆԴՈՒՆԵԼԻ Է
 ԸՆԴՈՒՆԵԼԻ ՉԷ

Վարկային վերլուծաբան/կառավարիչ _____

ԲՄ ռիսկերի պատասխանատու _____

Ամսաթիվ _____ / _____ / _____